Վարչական գործ թիվ ՎԴ-4/0074/05/09

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

12 դեկտեմբերի 2012թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը
նախագահությամբ դատավոր Արգիշտի Ղազարյանի,

մասնակցությամբ՝ հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպության
ներկայացուցիչ Կարեն Մեժլումյանի,

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ Զարթոնքի գյուղապետարանի՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետում հայցվող տեղեկատվության վերաբերյալ սպառիչ և լրիվ պատասխան չտրամադրելու Զարթոնքի գյուղապետարանի գործողությունները /անգործությունը/ ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին

Պ Ա Ր Զ Ե Տ

Գործի դատավարական նախապատմությունը

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայցադիմում էր ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Զարթոնքի գյուղապետարանի՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետում հայցվող տեղեկատվության վերաբերյալ սպառիչ և լրիվ պատասխան չտրամադրելու Զարթոնքի գյուղապետարանի գործողությունները /անգործությունը/ ոչ իրավաչափ ճանաչելու, Զարթոնքի գյուղապետարանին 2008թ. բյուջեի և Զարթոնք համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճենները տրամադրել պարտավորեցնելուն և Զարթոնքի գյուղապետ Պարույր Սարգսյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանը /դատավոր Արթուր Ծատուրյան/ 13.08.2009թ. վճռով վարչական գործի վարույթը կարճել էր՝ Զարթոնքի գյուղապետարանին 2008թ. բյուջեի և Զարթոնք համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճենները տրամադրել պարտավորեցնելուն և Զարթոնքի գյուղապետ Պարույր Սարգսյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներից հայցվորի հրաժարվելու և Զարթոնքի գյուղապետարանի՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետում հայցվող տեղեկատվության վերաբերյալ սպառիչ և լրիվ պատասխան չտրամադրելու Զարթոնքի գյուղապետարանի գործողությունները /անգործությունը/ ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա չլինելու հիմքով:

ՀՀ վարչական դատարանի 13.08.2009թ. վճռի դեմ վճռաբեկ բողոք էր ներկայացրել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը 22.04.2010թ. որոշմամբ բեկանել էր ՀՀ վարչական դատարանի 13.08.2009թ. վճռի՝ ՀՀ Արմավիրի մարզի Զարթոնքի գյուղապետարանի գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասով գործի վարույթը կարճելու մասը և այդ մասով գործն ուղարկել էր նույն դատարան՝ նոր քննության:

Գործի դատաքննությունն ավարտվել է 28.11.2012թ-ին:

Հայցվորի փաստարկները և հիմնավորումները

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 07.02.2009թ. հետևյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է կատարել Զարթոնքի գյուղապետ Պարույթ Սարգսյանին. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1.Զարթոնք համայնքի 2008թ. բյուջեի պատճեն:

2. Զարթոնք համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճեն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի խնդրում եմ հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին»:

Նշված փաստը հաստատվում է հարցման կրկնօրինակով և փոստային անդորրագրով:

Զարթոնքի գյուղապետարանը օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում տեղեկություն չի տրամադրել, ավելին՝ 30 օրյա ժամկետում ևս հայցվող տեղեկատվությունը չի ստացվել:

ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

27.1 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի 6-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն.«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը /կամ/ դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկատվությունը: Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվի 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ի խախտումն վերը նշված նորմերի Զարթոնքի գյուղապետարանը օրենքով սահմանված ժամկետում և դրա ավարտից հետո էլ չի տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ ոչ իրավաչափ ճանաչել Զարթոնքի գյուղապետարանի այն գործողությունները /անգործությունը/, որով օրենքով սահմանված առավելագույն ժամկետում սպառիչ և լրիվ պատասխան չի տրվել հայցվող տեղեկատվության վերաբերյալ»:

<u>Դատաքննությամբ հաստատված փաստերը</u>

- «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 07.02.2009թ. հետևյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է կատարել Զարթոնքի գյուղապետ Պարույթ Սարգսյանին. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.
  1.Զարթոնք համայնքի 2008թ. բյուջեի պատճեն:
  2. Զարթոնք համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճեն:
- Զարթոնքի գյուղապետարանը օրենքով սահմանված ժամկետում «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը չի տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

<u>Դատարանի եզրահանգումները</u>

Վարչական դատարանը գտնում է, որ հայցվորի փաստարկները և պնդումները, իրավական ակտերին վկայակոչումներն ու մեկնաբանությունները հիմնավոր են, համապատասխանում են դատարանի իրավական դիրքորոշումներին, որոնք հետևյալն են.

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

ՀՀ Սահմանադրության 27[1]-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի՝ գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Զարթոնքի գյուղապետարանը՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների իրացումն ապահովելու համար, պարտավոր էր կատարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի վերը նշված երեք ենթակետերով նախատեսված գործողություններից որևէ մեկը, որոնցով նախատեսված գործողությունների համար առավելագույն ժամկետ է սահմանված 5 օրը:

Զարթոնքի գյուղապետարանը հարցումն ստանալու պահից հնգօրյա ժամկետում չի կատարել վերը շարադրված գործողություններից ոչ մեկը, այլ հարցմանը պատասխանել է հնգօրյա ժամկետը լրանալուց հետո՝ սույն գործի դատաքննության ընթացքում:

Չնայած այն բանին, որ Զարթոնքի գյուղապետարանը ի վերջո պատասխանել է Հայցվորի հարցմանը և դրանով ընդունել է պատասխան տրամադրելու իր պարտականությունը, այնուհանդերձ դատարանը գտնում է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված հնգօրյա ժամկետի խախտմամբ է դա արել, դրանով իսկ խախտելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը, հետևաբար Զարթոնքի գյուղապետարանի գործողությունները /անգործությունը/, կապված Հայցվորի հարցմանը օրենքով սահմանված ժամկետում չպատասխանելու հետ, եղել են ոչ իրավաչափ:

Այսպիսով, Դատարանը գտավ, որ հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ, 113-րդ, 115-րդ հոդվածներով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ Զարթոնքի գյուղապետարանի՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետում հայցվող տեղեկատվության վերաբերյալ սպառիչ և լրիվ պատասխան չտրամադրելու Զարթոնքի գյուղապետարանի գործողությունները /անգործությունը/ ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

Ոչ իրավաչափ ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից հայցվող տեղեկատվության վերաբերյալ օրենքով սահմանված առավելագույն ժամկետում սպառիչ և լրիվ պատասխան չտրամադրելու Զարթոնքի գյուղապետարանի գործողությունները /անգործությունը/:

Զարթոնքի գյուղապետարանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության բռնագանձել 4.000 /չորս հազար/ դրամ՝ որպես նախապես վճարված և 20.000 /քսան հազար/ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարներ:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և մինչև օրինական ուժի մեջ մտնելը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան:

Օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամովին չկատարելու դեպքում վճիռը կկատարվի ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ ԱՐԳԻՇՏԻ ՂԱԶԱՐՅԱՆ